ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 130
23 դեկտեմբերի 2021 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, համայնքային բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների կողմից 2021 թվականի աշխատանքների կազմակերպումը, բյուջեի սեփական եկամուտների՝ հողի հարկի և հողի վարձակալական վճարի 70 և ավել % պլանային ցուցանիշների ապահովումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմին տարեկան աշխատանքային ու հնգամյա զարգացման ծրագրերն ու աշխատանքները պատշաճ կատարելու համար աշխատակիցներին պարգևատրել աշխատավարձի 100 % չափով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին ու տվյալ բնակավայրերի երկրորդ կարգի մասնագետներին պարգևատրել սեփական եկամուտների հավաքագրման համապատասխան %-ի չափով:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկի աշխատակիցներին պարգևատրել մինչև 70 %-ի չափով, իսկ մնացած համայնքային բյուջետային հիմնարկներին և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և աշխատակիցներին՝ համապատասխանաբար մինչև 40% և 20 %-ի չափերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ...8 | Դեմ՝ ... 1 | Չեռնպահ՝ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | | | |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | բացակա | | |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | | | |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | | | |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | | | |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | բացակա | | |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | | | |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | | | |
| Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ | բացակա | | |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | | | |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | բացակա | | |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | բացակա | | |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 23
Քաղաք Մարալիկ